Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«_07_»__դեկտեմբերի__2020 թ. թիվ 148 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
_____Ա. Մարգսյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 Թ. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԲԱԺՆԻ

Հաշվետու տարում ասպիրանտուրայի բաժինը կազմակերպել և իրականացրել է 2020-2021 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելությունը: Առկա ուսուցմամբ ասպիրանտուրա է ընդունվել 32 անվճար և 5 վճարովի հիմունքներով ասպիրանտ: Հեռակա ուսուցմամբ ընդունվել է 5 անվճար և 5 վճարովի հիմունքներով ասպիրանտ:

Տարեսկզբին ասպիրանտուրայում պետական պատվերով սովորում էր 89 ասպիրանտ, որից 32-ը՝ առկա, իսկ 57-ը՝ հեռակա, վճարովի հիմունքներով՝ 6-ը, որից 3-ը՝ արտերկրացի ասպիրանտ: Հայցորդների թիվը 176 էր, որից 75-ը՝ վճարովի հիմունքով, 101-ն անվճար (ԳԱԱ համակարգի աշխատակիցներ):

Հաշվետու տարում ասպիրանտուրան ավարտել է 30 ասպիրանտ (11-ը՝ առկա, 19-ը՝ հեռակա), և 1 վճարովի հիմունքներով արտերկրացի ասպիրանտ:

Առ 01.01. 2021 թ. պետպատվերով սովորող ասպիրանտների ընդհանուր թիվը 98 է, 55-ը՝ առկա, 43-ը՝ հեռակա: Վճարովի հիմունքներով սովորում է 15 ասպիրանտ՝, որից 2-ը արտերկրի քաղաքացի է: Հայցորդների թիվը 168 է. 78-ը սովորում է վճարովի, 90-ը՝ անվճար հիմունքներով (ԳԱԱ համակարգի աշխատակիցներ):

Հաշվետու տարում որակավորման քննություններին նախապատրաստելու և դրանք հանձնելու նպատակով ասպիրանտների և հայցորդների համար բաժինը կազմակերպել է գարնանային և աշնանային դասընթացներ “Մասնագիտական օտար լեզու” (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն), “Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ” և “Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն” առարկաներից: Սակայն Կովիդի

համաճարակի պատճառով գարնանային դասընթացներն ընդհատվեցին: Արձակուրսներից հետո, նոր ուսումնական տարում, աշնանային դասերի համար կազմակերպվեցին առցանց դասեր “Մասնագիտական օտար լեզու” (անգլերեն, և “Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ” առարկաներից: Դեկտեմբերին. պահպանելով համաճարակից խուսափելու կանոնակարգի բոլոր պահանջները, բարեհաջող իրականացրեցվեց պարտադիր դասընթացների աշնանային քննությունները:

Տարվա կտրվածքով ասպիրանտուրայում սովորողները քննություններ են հանձնել՝ «Մասնագիտական օտար լեզու» առարկայից՝ 39 «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» առարկայից՝ 53, «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկայից՝ 29 ասպիրանտ և հայցորդ:

2020թ. ԳԱԱ ասպիրանտուրայի շրջանավարտներից պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն 20-ը, որից 6-ը ասպիրանտներ, իսկ 14-ը հայցորդներ:

Հաշվետու տարվա ընթացքում պատրաստվել և տրվել են տեղեկանքներ՝ որակավորման քննությունների մասին ԲՈԿ ներկայացնելու համար և պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տրամադրելու վերաբերյալ զինկոմիսարիատներին ներկայացնելու համար:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն ներկայացնելու համար հավաքագրվել և ձևավորվել են ԳԱԱ գիտական կազմակերպություններից հաշվետու տարում ընդունված, ավարտած և սովորող ասպիրանտների, դոկտորանտների, հայցորդների թվաքանակի և շարժի վերաբերյալ ամփոփ հաշվետվությունները՝ համաձայն «Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» և «Վիճակագրական տեղեկությունների ներկայացման» ձևի և կարգի: